պատմության վաղ շրջանի հարցերին նվիրված գրականության մեջ տեղ գտած թերի և հակասական կոնցեպցիաների դեմ։

Հանդեսում այնուհետև տպագրված է Ա. Գրիգորյանցի «Արդյունաբերության վիճակը և բանվորների դրությունը Հայաստանում 1910—1914 թթ.» հոդվածը, որ նվիրված է Հայաստանի բանվոր դասակարգի պատմության բիչ ուսումնասիրված էջերից մեկին։ Հեղինակը ցույց է տալիս, որ այն բանից հետո, երբ կապիտալիզմը թևակոխեց իր զարգացման նոր շրջանը՝ իմպերիալիզմի շրջանը, Հայաստանի արդյունաբերության մեջ ևս տեղի ունեցավ կապիտալի համակենտրոնացում ու կենտրոնացում, որի հետևանքով աճեց Հայաստանի բանվոր դասակարգի շահագործման աստիճանը, աղքատացումը, սրվեցին աշխատանքի և կապիտալի միջև եղած հակասությունները։ Հարուստ փաստական տվյալների հիման վրա հեղինակը բացահայտում է առավելագույն շահույթ ձեռք բերելու նպատակին ուղղված կապիտալիստների միջոցառումները, որոնց նպատակն էր մաքսիմալ չափերով շահագործել Հայաստանի բանվոր դասակարգին և երկրի ընդերքի հարստությունները։

Հոդվածում հեղինակն անդրադառնում է Հայաստանի բանվոր դասակարգի տվյալ ժամանակաշրջանի ռևոլյուցիոն պոռթկումների պատմական պրոցեսին, ցույց է տալիս, թե ինչպես ռուսական առաջին ռևոլյուցիայի չլուծված հարցերը այդ շրջանում օրակարգի մեջ են դրվում նոր ուժով, և Հայաստանի բանվոր դասակարգը հետևելով համառուսական պրոլետարիատի օրինակին, չծախսված ուժերի կրակով պատրաստվում է նոր գրոհների։ Հեղինակը առանձնապես ընդգծել է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար դերը երկրամասի, այդ թվում և Հայաստանի բանվորական շարժումը կազմակերպելու, նրան նպատակասլաց ուղղություն տալու համար մըղվող պայքարում։

«Բանբերի» հոդվածների բաժնում տպված են նաև Մ. Հակոբյանի «Հայաստանի կոոպերացիայի պատմությունից» փոքրիկ հոդվածը, Գ. Հարությունյանի և Վ. Վարդանյանի «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչությունը և հայ գրողների փոխհարաբերությունը» ծավալուն հոդվածը, ինչպես և երկու հաղորդումներ (Խ. Բադալյան՝ «Էջեր օտար զավթիչների դեմ հայ և ադրբեջանական ժողովուրդների համատեղ պայքարի պատմությունից» և Պ. Կոկինոս՝ «Սփյուռքահայ կոմունիստների առաջին տպագիր կոչը և նրա պատմական նշանակությունը»)։ Բացի այդ, տպագրված է մեկ գրախոսություն, որը նվիրված է «Արխիվային շինարարությունը Հայաստանում» գրքին։

«Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի խնդիրն է՝ առաջին պլանի վրա մղել արխիվային փաստաթղթեր հրատարակելու, դրանք գիտական հասարակայնության լայն շրջաններին մատչելի դարձնելու գործը։ Եթե այս արդարացի պահանջներով մոտենանք «Բանբերի» առաջին գրքին և համեմատենք նրա բաժինների բովանդակությունը, կտեսնենք, որ հանդեսի 238 էջից միայն 44 էջն է հատկացված արխիվային փաստաթղթերի հրապարակմանը, մինչդեռ հոդվածներին ու հաղորդումներին հատկացված է հանդեսի ավելի քան 3/4-ը։ Դա, մեր կարծիքով, ճիշտ չէ, որովհետև հետին պլանի վրա է մղում հանդեսի առաջ դրված հիմնական խնդիրը։ Հանդեսը հիմնականում պետք է տպագրի իր մասնագիտացման տեսակետից ընդհանուր այնպիսի հոդվածներ, որոնք լուսաբանեն արխիվային գործի պատմության, արխիվային տեսության բարելավման, առաջավոր փորձի փոխանակման և նման այլ հարցեր։

Հ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

Վ. Հ. ՌՇՏՈՒՆԻ, *Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության.* հատ. Ա, Երևան, 1960, 340 էջ, գինը 13 ռ. 10 կ.։

Պրոֆ. Վ. Ռշտունին նպատակ է դրել երեք հատորով հրատարակել «Ուրվագծեր Հայաստանի (իմա՝ Արևելյան Հայաստանի) գյուղացիության պատմության» աշխատությունը։ Առաջին հատորը, որն արդեն լույս է տեսել և հանդիսանում է ներկա գրախոսության առարկան, ընդգրկում է 1828—1870 թթ., այսինքն՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց սկսած մինչև Հայաստանում գյուղացիական ռեֆորմի անցկացումը, երկրորդ հատորը ընդգրկելու է 1870—1900 թթ., իսկ երրորդը՝ 1900—1917 թթ.։

«Ուրվագծերի» առաջին հատորում հեղինակը համառոտակի կանգ է առնում 1828 թվականից առաջ Արևելյան Հայաստանում գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերություն-

ների բնութագրման վրա։ Նա բերում է ցարական պաշտոնյաների և պաշտոնական պատմաբանների, հայ լիբերալ-նարոդնիկների, ինչպես և բուրժուական տնտեսագետների հայացքները Հայաստանում ֆեոդալիզմի բնույթի մասին և ցույց է տալիս, որ նրանք, ելնելով իրենց դասակարգային շահերից, ժխտում էին հողի ֆեոդալական մասնավոր սեփականության փաստը։

Այսպես, պաշտոնական պատմաբաններ Ի. Տոպչիևը, Ս. Էսաձեն և Վ. Իվաննիկոն, ժխտելով այդ փաստը, աշխատում էին արդարացնել ցարիզմի գաղութային քաղաքականությունը տեղացիների, այդ թվում նաև ֆեոդալների հողերը բռնագրավելու գործում։ Պրոֆ. Վ. Ռշտունին իրավացիորեն նշում է, որ մինչև 40-ական թթ. ցարիզմը դեռ հեռու էր Հայաստանում տեղական կալվածատիրության վրա հենվելու մտքից և «ռուսական կալվածատիրական տարր ստեղծելու մեջ էր որոնում իր գաղութային քաղաքականության ամրապնդման տնտեսական-սոցիալական հենարանը» (էջ 12)։

Հայ լիբերալ-նարոդնիկները և բուրժուական տնտեսագետները ֆեոդալական հողատիրության առաջացումը Արևելյան Հայաստանում կապում էին ցարիզմի քաղաքականության հետ և, ժխտելով այդ հողատիրության գոյությունը պարսկական տիրապետության ժամանակ, փորձում էին պատմականորեն հիմնավորել հայ գյուղացու իրավունքները իր հողաբաժնի նկատմամբ։

Քննադատելով վերոհիշյալ հեղինակների սխալ դրույթները, հեղինակը գալիս է այն ճիշտ եզրակացության, որ Արևելյան Հայաստանում դեռևս պարսկական տիրապետության ժամանակ ֆեոդալները տիրում էին հողին, որպես մասնավոր սեփականության։

Պրոֆ. Վ. Ռշտունին այնուհետև անդրադառնում է այն հարցին, թե Արևելյան Հայաստանում ֆեոդալիզմը արդյոք օժտվա՞ծ էր ճորտատիրական գծերով։ Նա նշում է, որ վերոհիշյալ պաշտոնական և լիբերալ-նարոդնիկական պատմաբանները այդ հարցին տալիս էին բացասական պատասխան, իսկ մարքսիստ ուսումնասիրողները հայտնում են տարբեր կարծիքներ։ Այսպես, պրոֆ. Ա. Եսայանը գտնում էր, որ մուլքադարական ու թիուլդարական գյուղացիները բուն էության ճորտեր էին, թեև ամրացված չէին հողին և, հետևաբար, ազատ տեղափոխման իրավունք ունեին։ Պրոֆ. Ի. Պետրուշևսկին եզրակացնում է, որ այդ գյուղացիները համարյա նույնպիսի ճորտեր էին, ինչպիսիք կային Վրաստանում, միայն այն տարբերությամբ, որ Հայաստանում նրանց ճորտական վիճակը չէր արտացոլված օրենսդրության մեջ։ Նրա այս կարծիքը անվերապահորեն ընդունում է նաև պրոֆ. Մ. Ադայանը՝ Ադրբեջանի նկատմամբ։ Հանգուցյալ Ռ. Հարությունյանը մերժում էր պրոֆ. Ի. Պետրուշևսկու այդ գրույթը և գտնում, որ Հայաստանում կարելի է խոսել ոչ թե ճորտատիրության, այլ նրա քիչ թե շատ շոշափելի տարրերի մասին։ Եվ այսպես, բերելով մարքսիստ հեղինակների կարծիքները Հայաստանում ճորտատիրության գոյության մասին, Վ. Ռշտունին եզրափակում է, որ պատմական փաստերի հիման վրա պետք է հերքված համարել ցարական իշխանության պաշտոնական ներկայացուցիչների, ցարական կիսապաշտոնական բուրժուական և նարոդնիկական հեղինակների տեսակետը՝ Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգի բնույթի մասին։ «Սակայն դեռ հաղթահարված չէ որոշ տարաձայնություն մեկ հիմնական հարցում. ոմանք այն միտքն են արտահայտում, որ գրեթե ամբողջ գյուղացիության ճորտացումը, ուրեմն և հողին ամրացնելը, Իրանի հետ միասին, դարեր շարունակ իրականություն էր նաև Արևելյան Հայաստանում, ուրեմն և Ռուսաստանին նրա միանալու նախօրյակին, իսկ մյուսները գտնում են, որ կարելի է խոսել միայն Արևելյան Հայաստանում ճորտատիրության բազմաթիվ տարրերի, բայց ոչ թե գյուղացիության ճորտացման և հողին ամրացնելու ակներև իրողության մասին, ինչպես Վրաստանում կամ Ռուսաստանում։ Անշուշտ, սովետական ուսումնասիրողների ջանքերով, պետք է հուսալ, որ մոտ ապագայում ընդունելի լուծում կստանա նաև այդ վիճելի հարցը, որը կարևոր նշանակություն ունի XIX դարի գյուղացիության պատմության հետազոտությունը ճիշտ հողի վրա դնելու համար» (էջ 46)։ Այլ կերպ ասած, նա գյուղացիության ճորտացման հարցը Հայաստանում իրավացիորեն բաց է թողնում. հարցի մշակման ներկա մակարդակը դեռ հնարավորություն չի տալիս այդ առթիվ վճռական խոսք ասելու։ Անհրաժեշտ է երևան հանել հայկական գյուղի պարսկական տիրապետության ժամանակաշրջանի կյանքը բնորոշող նոր փաստեր։

Պրոֆ. Վ. Ռշտունին այնուհետև նշում է, որ ֆեոդալների դասը Արևելյան Հայաստանում պարսկական տիրապետության ժամանակ բաղկացած էր մուլքադարներից և թիուլդարներից։ Մուլքադարները «դրանք ֆեոդալական կալվածատերեր էին՝ հողերի ժառանգական սեփականատիրական իրավունքով, հետևաբար, վաճառելու, նվիրելու և կտակելու արտոնությունով, իհարկե, նաև նոր կալված գնելու իրավունքով» (էջ 52)։ Իսկ թիուլդարները նույնպես ֆեոդալներ էին, բայց այլ բնույթի։ Նրանց հողատիրությունը «ժառանգական բնույթ չուներ, այլ պայմանական ֆեոդալական հողատիրու-

թյուն էր, արևմտաեվրոպական բենեֆիցիաների կամ ռուսական պոմեստիեների նման, և տրվում էր իբրև պարգև հատուկ վաստակների համար ցմահ կամ պետական ծառայության ժամանակաշրջանում» (էջ 54)։ Ֆեոդալական դասի ճնշող մեծամասնություններ կազմում էին մուլքադարները։ Եթե պատահում էր այնպես, որ միևնույն անձը հանդիսանում էր և՛ մուլքադար, և՛ թիուլդար, այս դեպքում նրա ստացած եկամուտը համարյա կրկնապատկվում էր։

Ամրագրելով ֆեոդալական տիրապետող վերնախավի և շահագործվող գյուղացիության բանակական փոխհարաբերության հարցին, Վ. Ռշտունին մի շարք ուշագրավ հաշվումներով ցույց է տալիս, որ XIX դ. 30-ական թվականներին ազնվականություններ կազմել է 3 173 մարդ, կամ բնակչության 1,9 տոկոսը, հոգևորականությունը՝ 5 290 մարդ կամ՝ 3,2 տոկոսը, առևտրականներն ու արհեստավորները՝ 10 124 մարդ, կամ՝ 6,1 տոկոսը, իսկ գյուղացիությունը, բոշվորների հետ միասին՝ 145 863 մարդ, կամ՝ 88,8 տոկոսը (էջ 65)։ Ազնվականները, ըստ ազգության, հիմնականում ադրբեջանցիներ էին. նրանք կրում էին խան, բեկ, սուլթան անունները, հայ կալվածատերերը՝ մելիքները նրանց մեջ չնչին փոքրամասնություն էին։ Իսկ գյուղացիները մեծ մասամբ հայեր էին։ Օրինակ, ըստ հեղինակի բերած տվյալների, նշված ժամանակաշրջանում Հայաստանում հաշվվում էր 241 112 մարդ, որից հայեր՝ 141 682 կամ 58,8 տոկոս, ադրբեջանցիներ՝ 83 165 կամ 34,5 տոկոս և բրդեր՝ 15 415 կամ 6,4 տոկոս (էջ 65)։

Գյուղացիների մոտ 70—73 տոկոսը բնակվում էր պետական, իսկ 27—30 տոկոսը՝ կալվածատիրական հողերի վրա։ Վանքապատկան գյուղացիների թիվն աննշան էր. նրանք ամբողջ գյուղացիության նույնիսկ մեկ տոկոսը չէին կազմում։ Հայաստանում կար գյուղացիության մի կատեգորիա ևս, որը ռանչպար էր կոչվում։ Հեղինակի բնութագրումից երևում է, որ ռանչպարները Արևելյան Հայաստանում համարյա նույնն էին, ինչ մարապանները՝ Արևմտյան Հայաստանում։ Սակայն ի տարբերություն մարապանների, ռանչպարների թիվն այստեղ չնչին էր։ Նրանք բնակվում էին ընդամենը 8 գյուղում, որոնցից երկուսը պետական էին, երկուսը՝ մեչիտապատկան, իսկ չորսը՝ մուլքադարական։

Պրոֆ. Վ. Ռշտունին նշում է, որ պարսկական տիրապետության ժամանակ հայ աշխատավոր գյուղացիների վիճակը անտանելի էր. սարդարը, բեկերն ու սուլթանները ցանկացած ժամանակ կարող էին զրկել նրանց կյանքից ու դույքից, ստիպում էին կոռ կատարել, բահրա վճարել, ինչպես և դրամական հարկեր տալ։ Գյուղացիների թվարկված տարբեր կատեգորիաների մեջ համեմատաբար բարվոք էր պետական գյուղացիների վիճակը՝ ֆեոդալական ճորտատիրական ճնշումը սրանց վրա համեմատաբար քիչ էր ծանրացած։

Բնութագրելով ֆեոդալական հարաբերությունները և գյուղացիության վիճակը Արևելյան Հայաստանում պարսկական տիրապետության վերջին շրջանում, հեղինակը այնուհետև կանգ է առնում ցարիզմի գաղութային ու ագրարային բաղաքականության վրա՝ Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո։ Նա ցույց է տալիս, որ դեռ 1827 թ. Պետերբուրգում մշակվեց «Նախագիծ», որի մեջ նշվում էր, թե «ազնվականության» կամ ինչպես նրան սկսեցին կոչել «բարձր դասի» և գյուղացիության միջև եղած հարաբերությունները պետք է թողնել անփոփոխ. 1829 թ. Պասկեիչի «հրահանգով» ճանաչվեցին Հայկական մարզի կալվածատերերի հիմնական շերտի՝ մուլքադարների ժառանգական իրավունքները։ Ճանաչվեցին նաև թիուլդարների իրավունքները, բայց մի մասին ցմահ, իսկ մյուսներին՝ ժառանգական սկզբունքներով։ Թիուլդարը կարող էր հաստատել իր կալվածատիրական իրավունքները, եթե ներկայացներ պարսկական իշխանությունների կողմից շնորհված համապատասխան փաստաթղթեր։

Աշխատության մեջ նշվում է, որ չնայած դրան, հայ գյուղացիության դրությունը ցարիզմի տիրապետության օրոք համեմատաբար բարելավվեց։ Ցարական օրենքները այնուամենայնիվ ապահովեցին գյուղացու անձի ու գույքի անձեռնմխելիությունը և թեթևացրին նրանից գանձվող հարկերն ու տուրքերը։ Մի շարք ուշագրավ հաշվումներից հետո հեղինակը ցույց է տալիս, որ պարսկական տիրապետության վերջին տարիներում մեկ շունը վճարում էր համարյա այնքան տուրք (7,2 ռուբ.), ինչքան վճարում էր մեկ ընտանիքը (7,7 ռուբ.) ցարական տիրապետության առաջին տարիներին։ «...Բերված տվյալները,— գրում է Վ. Ռշտունին,— պարսկական և ռուսական տուրքերի չափերի մասին այն անուրանալի փաստի իրական արտահայտությունն են, որոնք ապացուցում են, որ արևելահայ գյուղացիությունը 1828 թ. ոչ միայն բաղաքականապես ազատագրվեց, իր ազգային դեմքն ու կուլտուրան փրկեց ոչնչացումից, այլև տնտեսապես խուսափեց անկումից ու կործանումից, որ սպառնում էր նրան պարսկական դաժան ռեժիմի պայմաններում» (էջ 116)։

Սակայն հեղինակը չի անտեսում, որ գրաբվելով Ռուսական կայսրության տիրապետության ներքո, հայ գյուղացին չէր կարող չեն-

թարկվել այն հարստահարումներին ու կեղեքումներին, որոնք գոյություն ունեին Նիկոլայեան դաժան ռեժիմի օրոք։ Հայկական մարզի իշխանությունները տարեցտարի բարձրացնում էին գյուղացիներից գանձվելիք հարկերը և ուժեղացնում նրանց ճնշումն ու հարստահարումը, որոնք, թեև երբեք չհասան պարսկականի մակարդակին, բայց և այնպես խոչընդոտում էին գյուղացիական տնտեսությունների զարգացումը։

Ցարիզմի վարած հարկային քաղաքականությունը տեղիք է տալիս համագյուղացիական ըմբոստացումների։ Եվ 1830-ական թվականներին Փամբակ-Շորագյալում ու Գյոկչայում գյուղացիները հրաժարվում են հարկեր վճարելուց, պարհակներ կատարելուց և ընդդիմակայում են իշխանություններին։ Վերջիններս միայն երկարատև պայքարից հետո կարողանում են «հանգստացնել» նրանց։

Այնուհետև ցույց է տրվում, որ ցարիզմը ճորտատիրական քաղաքականության հետ միասին Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում, տանում էր նաև գաղութային քաղաքականություն։ Նա ձգտում էր Անդրկովկասի տնտեսական հնարավորությունները ի սպաս դնել ռուսական արդյունաբերության պահանջներին, բռնագրավել տեղացիների հողերը և տալ ռուս գաղթականներին։ Այդ քաղաքականությունն անցկացնելու համար նա իր տիրապետության առաջին տասնամյակներում, ինչպես ասվեց, հենվում էր ռուս չինովնիկության վրա, իսկ տեղական կալվածատիրություններ անտեսում էր։ Ավելին, 1841 թ. հատուկ օրենքով Ղազախի, Շամշադինի և Բորչալուի նախկին դիստանցիաների ազալարները և հայ մելիքները հեռացվեցին գյուղերը կառավարելու պաշտոնից, իսկ նրանց կալվածքները բռնագրավվեցին։ Ցարական պաշտոնյաները այդ օրենքը ուզում էին տարածել նաև կալվածատիրական մյուս շերտերի՝ մուլքագարների ու թիուլգարների վրա, բայց կանգնեցին «թե ժողովրդական լայն մասսաներից ծայր առնող ըմբոստությունների դեմ և թե կալվածատիրական շերտերից լսվող ապմրկալի վայնասունների հանդեպ» (էջ 159)։ Երությունից դուրս գալու համար ցարիզմը այդ օրենքի նախագծի հեղինակին՝ սենատոր Դանիլ. Հայտարարեց բարձրագույն իշխանության մոլորեցնող, նրա վստահությունը չարաշահող և հեռացրեց պաշտոնից, իսկ ազալարների իրավունքները վերականգնեցրեց։ Այնուհետև փորձեր կատարվեցին կալվածատիրությունը բանակապես աճեցնելու ուղղությամբ և դաշն կնքվեց նրա հետ ընդդեմ աշխատավոր գյուղացիության։

Պրոֆ. Վ. Ռշտունին հատուկ ուշադրություն է դարձնում Նիկոլայ I-ի 1846 թ. դեկտեմբերի 6-ի ուսկրիպտի (շնորհաթղթի) վրա։ Նա դիտում է այն որպես մի պատմական փաստաթուղթ, որով ցարը ոչ միայն վերականգնեցնում էր ազալարների կալվածատիրական իրավունքները, այլև դարձնում նրանց տեղական մյուս ֆեոդալական շերտերի հետ հավասար ժառանգական հողատերեր։ Ուսկրիպտը որոշ իրավունքներ է տալիս ազալարներին իրենց գյուղացիների կառավարման բնագավառում և այդպիսով օժտում էր նրանց ճորտատերերի արտոնություններով։ Ուսկրիպտի հիման վրա 1847 թ. լույս տեսան այսպես կոչված բեկական ու ազալարական «կանոնադրությունները», որոնցով սահմանվում էին գյուղացիների պարտավորությունները հողատերերի օգտին։ Դիշտ է, այդ կանոնադրությունները հիմնականում վերաբերում էին Ադրբեջանին, բայց նրանց հիման վրա 1851 թ. հունիսի 8-ին մշակվեց կանոնադրություն նաև Հայաստանի համար։ Բավական հանգամանորեն վերլուծելով այդ կանոնադրությունների յուվանդակությունը, հեղինակը գրում է. «...ցարիզմը բավական ցայտուն ֆեոդալական ճորտատիրական ձևակերպում տվեց Ադրբեջանի ու Հայաստանի կալվածատիրական շերտերի իրավունքներին գյուղացիների նկատմամբ։ Վերջիններիս ուսերին բարդվեցին և բնատուրքի (մալջեհաթի), և կոռի (մշակ տալու պարտականություն գյուղատնտեսական գործիքներով միասին ու էվրեզ), և տնային ծառայության (նման այն ճորտերին, որոնց Ռուսաստանում անվանում էին дворовые люди), և զրամական տուրքի (չոպրաշի և վճար քոչավայրի համար) պարտականությունները, նման ռուսական և վրացական ճորտերի պարհակներին՝ ազնվական կալվածատերերի հանդեպ» (էջ 169)։ Այնուհետև նա նշում է, որ 1847 թ. կանոնադրությունները Ադրբեջանում կիրառվեցին, կիրառվեցին մասամբ նաև Հայաստանի Զանգեզուր և Ղազախ-Շամշադին շրջաններում, իսկ 1851 թ. կանոնադրություններ Հայաստանում չգործադրվեց։ Նրա գործադրման սկզբում խանգարեց Արևելյան պատերազմը, իսկ հետո՝ Ռուսաստանում ճորտական իրավունքի վերացման նախապատրաստումը։ Այդ պատճառով էլ Երևանյան նահանգում կալվածատերերի և գյուղացիների փոխհարաբերությունները մինչև 1870 թ. ռեֆորմը հիմնականում մնացին այնպես, ինչպես կարգավորված էին 30-ական թվականների գանազան օրենսդրական ու վարչական ակտերով։

Գրքի հեղինակը Հայաստանում ցարիզմի տիրապետության ժամանակաշրջանում գոյություն ունեցող արտադրահարաբերությունները բնութագրում է որպես կիսաֆեոդալական և կիսա-

ճորտական հարաբերություններ։ Մեզ թվում է, որ այսպիսի բնորոշումը խիստ ընդհանուր է։ Դժբախտաբար Վ. Ռշտունին, ինչպես նաև մի շարք այլ ուսումնասիրողներ, իրենց եզրակացությունները բխեցնում են ոչ այնքան կյանքից վերցված կոնկրետ փաստերից, որքան ցարական օրենսդրություններից։ Մինչդեռ օրենսդրությունները, ինչպես հայտնի է, հաճախ մնում են թղթի վրա։ Պատմաբանը հասարակական արտադրահարաբերությունները վերլուծելիս, պետք է պարզի ոչ միայն վարիացիաները, այլև դրադացիաները։ Արդարև, հազիվ թե կարելի է պնդել, թե գյուղացիների անձնական կախվածության ձևերը Հայաստանի բոլոր շրջաններում միանման էին։ Ընդհակառակը, այդ ձևերը որոշ տեղերում մեղմ էին, այլ տեղերում՝ խիստ։ Արանք հարցեր են, որոնք դեռ պետք է լուսաբանել, ընդ որում, լուսաբանել իրական կյանքից վերցրած փաստերով։

Ցարիզմի քաղաքականությունը և Հայաստանում գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունները բնութագրելուց հետո պրոֆ. Վ. Ռշտունին անցնում է Հայաստանի տնտեսական զարգացման բնութագրմանը։ Նա իրավացիորեն նշում է, որ Ռուսաստանին միանալուց հետո Հայաստանում այնուամենայնիվ պայմաններ ստեղծվեցին արտադրողական ուժերի և ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացման համար։ Շնորհիվ այդ զարգացման, գյուղը տնտեսապես կապվում է քաղաքի հետ, երկրի տարբեր շրջանները՝ միմյանց հետ, Երևանի նահանգը՝ Թիֆլիսի, Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգների հետ։ Հատկապես 1850—1860-ական թվականներին ընդարձակվում է Հայաստանի արտաքին առևտուրը։ Նա գյուղատնտեսական մթերքներ է արտահանում դեպի Կենտրոնական Ռուսաստան, իսկ այնտեղից ստանում արդյունաբերական ապրանքներ։

Ամփոփելով Հայաստանի տնտեսական զարգացումը XIX դ. կեսին, Վ. Ռշտունին գալիս է այն ճիշտ եզրակացության, որ «Անդրկովկասի հետ միասին, Հայաստանում ևս, թեև դանդաղ, բայց բավականաչափ նկատելի ձևով, ֆեոդալական հարաբերությունների գրկում, տեղի էր ունենում բուրժուական տնտեսության տարրերի զարգացման պրոցեսը։ Ռուսաստանից հետո և նրա ազդեցության հետևանքով ցարական այս դաղութի տնտեսական կյանքն էլ օժտված էր նոր, բուրժուական շոշափելի գծերով և այդ ոչ միայն արդյունաբերության, այլև մասամբ գյուղատնտեսության մեջ։ Հին, ֆեոդալական տիրող հարաբերությունների և նոր, բուրժուական տնտեսության զարգացող տարրերի բախման ոլորտն էր ներգրավվում գյուղը 50—60-ական թվականների ընթացքում» (էջ 239)։

Գրախոսվող աշխատության հեղինակը հանգամանորեն նկարագրում է Հայաստանի գյուղացիության մղած դասակարգային պայքարը 1828—1870 թթ. ընկած ժամանակաշրջանում։ Նա ցույց է տալիս, որ Ռուսաստանի ինչպես մյուս շրջանների, նույնպես և Հայաստանի գյուղացիները պայքարում էին ցարիզմի, տեղական ֆեոդալների և գյուղի կուլակային տարրերի հարստահարումների դեմ։ Սակայն դրա հետ մեկտեղ նա նշում է նաև հայկական գյուղում տեղի ունեցող դասակարգային պայքարի առանձնահատուկ կողմերը։ Այդ առանձնահատկություններից ամենակարևորն այն է, որ Հայաստանում գյուղացիական շարժումները ոչ միայն իրենց ծավալով, այլև իրենց բնույթով չեն հասել այն աստիճանին, ինչ որ, օրինակ, Վրաստանում, մասամբ նաև Ադրբեջանում։ Հեղինակն այդ բացատրում է նրանով, որ ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների ծանրությունը Հայաստանում այն աստիճանի հասած չի եղել, ինչ որ, օրինակ, Վրաստանում, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ իր փրկության հույսը կապել էր Ռուսաստանի հետ, իսկ դա խոչընդոտել է նրա ծավալուն պայքարը ցարիզմի դեմ և այլն։ Այնուամենայնիվ Հայաստանի գյուղացիությունը իր շահագործողների և կեղեքողների դեմ պայքարել է ինչպես կարողացել է։ Նրա պայքարը արտահայտվել է մերթ մասսայական բողոքների ու գանգատների, մերթ հարկերից ու տուրքերից, ինչպես և պարհակներ կատարելուց հրաժարվելու, մերթ կալվածատիրական հողերը լքելու և պետական հողերի վրա տեղափոխվելու, մերթ զինված ելույթների ու պայքարի այլ ձևերով։ Նրանցից, սակայն, ամենատարածվածը մասսայական բողոքների ու հարկերից հրաժարվելու ձևերն էին։ Հայաստանի որոշ շրջաններում ցարական իշխանությունները գյուղացիական ելույթները սանձահարում էին զինված ուժերի օգնությամբ։ Հեղինակը հանգամանորեն նկարագրում է Փամբակ-Շորագյալի, Գյոկչայի (1837—1838), Շուլավերի (1852) և այլ վայրերի բնակիչների նշանավոր ելույթները և իրավացիորեն նշում, որ դրանցով ամենևին էլ չեն վերջանում Հայաստանի գյուղացիության պայքարի պանծալի էջերը։

Գրախոսվող աշխատության վերջում ցույց է տրվում հայ հասարակական հոսանքների դիրքավորումը գյուղացիական հարցի նկատմամբ։ Իրավացիորեն նշվում է, որ կղերա-ֆեոդալական ռեակցիոն հոսանքի ներկայացուցիչները պաշտպանում էին հողատերերի շահերը և այդ նպատակով «Ճռաքաղում», «Համբավաբեր Ռուսիայում», «Մեղու Հայաստանում» և այլ օրգաններում անվերապահորեն փառաբանում

ու գովերգում էին ցարիզմի բոլոր միջոցառումները։ Հայկական բուրժուազիան ելնելով այն բանից, որ ցարիզմի թևի տակ իր աճի համար գոյություն ունեին բավականաչափ լայն հնարավորություններ, նույնպես հավանություն էր տալիս ցարիզմի վարած քաղաքականությանը։

Հեղինակը հայ կղերա-ֆեոդալական ու բուրժուական հոսանքներին իրավացիորեն հակադրում է հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքը, որի կարկառուն ներկայացուցիչը Մ. Նալբանդյանն էր։ Նալբանդյանը Ռուսաստանի գյուղացիական ռեֆորմին կամ ճորտական իրավունքի վերացմանը մոտենում էր ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատիայի տեսակետից։ Նա գտնում էր, որ հողը պետք է տրվի գյուղացիներին և միայն այդ դեպքում հնարավոր կլինի ազատել նրանց ճորտությունից ու անցնել սոցիալիզմին։ Իհարկե, նրա պատկերացրած սոցիալիզմը մանր բուրժուական սոցիալիզմ էր, բայց այդ գաղափարը այն ժամանակվա համար ամենաառաջադիմականն էր, քանի որ հողը գյուղացիներին տալը ենթադրում էր կալվածատիրական հողատիրության ոչնչացում, իսկ այդ հողատիրության ոչնչացումը լայն պայմաններ կստեղծեր երկրի արտադրողական ուժերի և նոր, կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացման համար։

Այսպիսով, պրոֆ. Վ. Ռշտունու «Ուրվագծերի» առաջին հատորը մի արժեքավոր ներդրում է Հայաստանի գյուղացիության պատմության ուսումնասիրության բնագավառում։ Հեղինակը ամփոփելով սովետահայ պատմագրության ձեռք բերած նվաճումները գյուղացիության պատմության մշակման ասպարեզում. ո՛չ միայն պաշտպանել է իր մի շարք նախկին ճիշտ դրույթները, այլև խորացրել ու զարգացրել է դրանք։

Սակայն աղբյուրների և տեղեկությունների բացակայության պատճառով նա հարկադրված է եղել բաց թողնել Հայաստանի գյուղացիության պատմության վերաբերյալ մի շարք կարևոր հարցերի լուսաբանումը։ Այդպիսի հարցերից են և ճորտատիրության գոյությունը Հայաստանում պարսկական ու ցարական տիրապետության ժամանակաշրջաններում, Հայաստանի գյուղական բնակչության տարբեր շերտերի մասնակցությունը ապրանքային արտադրության մեջ, գյուղացիության և արհեստավորների ունեցվածքային շերտավորումը, վարձու աշխատանքի տարածման չափերն ու բնույթը գյուղատնտեսության մեջ, Հայաստանի գյուղացիական շարժումները 60-ական թվականներին և այլն։ Հետագա ուսումնասիրողները, անշուշտ, աշխատանք պետք է ծավալեն այդ ուղղությամբ։

Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ

SIRARPIE DER-NERSESSIAN, *A Catalogue of the Armenian Manuscripts*. The Chester Beatty Library, Dublin, 1958, in Two Volumes.

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ, *Հայերեն ձեռագրերի մի ցուցակ.* **Չեստըր Բիտտիի գրատուն. Դուբլին, 1958, երկու հատորով:**

1958 թվականին Դուբլինում (Իռլանդիա) լույս է տեսել հայ մանրանկարչության և բյուզանդական արվեստի հայտնի մասնագետ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Սիրարփի Տեր-Ներսեսյանի կազմած Ձեռագրացուցակը՝ երկու հատորով։ Նկարագրված ձեռագրերը պատկանում են մի անհատ մարդու՝ սըր Չեստըր Բիտթիին, որը մեծ սեր և հակում ունի ընդհանրապես ձեռագրերի մանրանկարչական արվեստի և մասնավորապես՝ հայ մանրանկարչության նկատմամբ։ Չեստըր Բիտթին հայերեն ձեռագրերի նկատմամբ իր հետաքրքրությունը բացատրում է նրանով, որ հայ գրչության արվեստի նվաճումները մեծ տպավորություն են թողել իր վրա։ Նա համոզված է, որ հայ գրչության արվեստը, լինելով կարևոր կապ Արևելքի և Արևմուտքի գրչության արվեստների միջև, համեմատաբար քիչ է ուսումնասիրված եվրոպայում։ Այդ պատճառով նա մեծ բարերարություն է համարում այն, որ իր մոտ եղած հայերեն ձեռագրերի գիտական նկարագրությունը հանձն է առել այնպիսի մի խոշոր հայագետ և մանրանկարչության հմուտ մասնագետ, ինչպիսին Սիրարփի Տեր-Ներսեսյանն է։

Չեստըր Բիտթին ունի անձնական խոշոր գրադարան, որտեղ ի մի են հավաքված պատմական խոր անցյալ ունեցող կուլտուրական շատ ժողովուրդների ձեռագիր գանձեր։ Այդ գրադարանի համարակալված ձեռագիր աշխատությունների հայկական բաժինը ամփոփում է 67 միավոր՝ սկսած 551 համարից մինչև 617 համարը, ըստ որում դրանցից 3-ը աստվածաշնչեր են (1 համառոտ, 1 ամբողջական և 1 պակասավոր), 40-ը՝ ավետարան, 2-ը՝ սաղմոսարան, 6-ը՝ շարակնոց, 4-ը՝ քարոզգիրք, 5-ը՝ հայսմավուրք, 1-ը՝ մաշտոց, 1-ը՝ եկեղե-